



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 16 » սեպտեմբեր 2025 թ.

N 95-26/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-Ի N 147-Ա/1 ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» N 147-Ա/1 հրամանի հավելվածի 12-րդ գլուխը շարադրել նոր խմբագրությամբ.

«XII. Նախարարության և միասնական սոցիալական ծառայության
միջև իրականացվող փաստաթղթերի շարժը



140. Նախարարության և միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ ծառայություն) միջև փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով՝ առցանց եղանակով :

141. Նախարարը անձամբ հանձնարարականներ է տալիս ծառայության պետին կամ դրանք փոխանցում է նախարարության գլխավոր քարտուղարի, նախարարի տեղակալների միջոցով:

142. Վարչապետի աշխատակազմից, Ազգային ժողովի պատգամավորներից, Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակից, գլխավոր դատախազությունից, հաշվեքննիչ պալատից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված հսկողական գրությունների պատասխանները ձևավորում են նախարարության ստորաբաժանումները:

143. Նախարարի տեղակալները և նախարարության գլխավոր քարտուղարը 142-րդ կետով սահմանված մարմիններից ստացված **հսկողական գրությունները**, անհրաժեշտության դեպքում ծառայությունից համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով, հասցեագրում են ծառայության պետին:

144. Իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով նախարարի տեղակալները կամ նախարարության գլխավոր քարտուղարը գրությունները հասցեագրում են ծառայության պետին:

145. Ծառայությունը տեղեկատվություն հայցվող գրությունների ընթացքն ապահովում է գրություններով ակնկալվող ամրագրված ժամկետներում:

146. Ծառայության գործունեությանն առնչվող քաղաքացիների դիմում-բողոքների ընթացքը ապահովելու նպատակով նախարարությունը անհրաժեշտության դեպքում սահմանված ընթացակարգով տեղեկատվություն է հայցում ծառայությունից:

147. Ծառայությունից համապատասխան տեղեկատվություն ստանալու նպատակով նախարարի տեղակալները, նախարարության գլխավոր քարտուղարը **ոչ հսկողական գրությունները** հասցեագրում են ծառայության պետին կամ ծառայության գլխավոր քարտուղարին: Ծառայության գլխավոր քարտուղարին հասցեագրված **ոչ հսկողական գրությունները** կարող է ստորագրել նաև նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալը:



